

սահմանք. Մէվլայիքն ի Ղօնեայ՝ զՄօլայ
 խօնդքարն, եւ Շէխերն յԵրուսաղէմ՝ զՍողոմոնի տաճարն, եւ Ենկիչարիքն՝ զՀաճիպէքտաշն. իսկ Էմիրնին ի Կեսարիա՝ զէմիր
 65 սուլթան. իսկ քրիստոնեայքն առաւել եւս ունին :

ԻՐԱՒԱԿԱՆ ԿԱՐԳՔ

Այլ եւ ունի Փափն ամէն երկիր Լէկաթ,
 որ է նուիրակ : Եւ ամէն տարի Ենէրալնի առաքէ առ ի դատել եւ քննել զանուղղայ կար-
 70 գաւորս եւ զնել հարպետ, առաջնորդ, վանաց հայր : Եւ այսպէս ամէն երեք տարի փոխեն եւ այլ զնեն. այսպիսի կարգաւ վարին : Եւ սահման կայ ի մէջ նոցա, զի ոչ ոք չկարէ դատել զկարգաւորսն, բայց միայն եպիսկո-
 75 պոսն. եւ զեպիսկոպոսն Փափն կամ Լէկաթն : Իսկ զհարեղայս վանորէիցն՝ հայրապետն միայն եւ ոչ այլ ոք. եւ աչ թագաւորն, ոչ իշխանք, ոչ տուքս, ոչ այլ մեծամեծքն կարող չեն դատել զեկեղեցականս եւ ոչ կղերիկոս
 80 մի : Ապա վա՛յ աղգիս իմոյ կարգաւորացն : Զի կայ այս բարի սահմանս եւ ի մէջ Տաճկաց, թէպէտ անօրէնք են. զի ենկիչարին այլ ոք դատի, սպահին՝ այլ, զսօխթանին եւ զչեխերն՝ այլք. իսկ նոցա կարգացողսն ոչ
 85 ոք իշխէ դատել, նա եւ ոչ խօնդքարն, որպէս զէմիրսն, է՛հլի էլիման եւ այլսն : Ո՛հ մեծի